



Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԲԱԳԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԺԲ. Տարի - ԱՊՐԻԼ 1936



12^{me} Année - Avril 1936



Խմբագրական

Օրհնեալ է յարութիւնն Բրիտանի

Յ. Ն. Ղ.

Հոգ. կեանք

Յիսուսի նայինք

Վեր. Ա. Զ. Եղոյեան

Գողգոթա՛ն

Սամուէլ Գ.

Սուրբ Օգոստինոսի խոստովանութիւնները

Զ. Բ. Պոլտաքեան

Շնորհաց ծովէն

Բեզ պիտի գովեմ

Թագոօհի Տէր Ղազարեան

Կենաց ածուներէն

Յաղթողները

Վեր. Ա. Օ. Փափազեան

Սերտողութիւն

Կիրակնօրեայ դասերու ներքնշուները

Վ. Ս.

Պատանեաց

Կրկնակ յարութեան տօն

Յիսուս «Իմ Վէմս»



Արթնցի՛ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

ԲԱՆԲԵՐ

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Ուրեմն ա՛լ վախճանք, որ չըլլայ Թէ
Անոր հանգիստը մոնկու խոստմունքէն որ մեզի մնացել է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Երբ. Ժ. 37

ԺԲ. ՏԱՐԻ

ԱՊՐԻԼ 1956

ԹԻԻ 4



ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ

«Եթէ Քրիստոս յարութիւն առած չէ, կ'ըսէ Պո-
ղոս Առաքեալ Ա. Կոր. ԺԵ. 14-20ի մէջ, ուրեմն մեր
քարոզութիւնը պարապ է և ձեր հաւատքն ալ պա-
րապ է և մենք ալ Աստուծոյ սուտ վկաները գտնը-
լած կ'ըլլանք, որովհետեւ Աստուծոյ համար վկայու-
թիւն տուինք թէ Ինք մեռելներէն յարուց Քրիս-
տոսը... Եթէ Քրիստոս յարութիւն առած չէ, ձեր
հաւատքը պարապ է ու տակաւին ձեր մեղքե-
րուն մէջ էք... Եթէ միայն այս կեանքին հա-
մար Քրիստոսի յուսացած ենք, մենք բոլոր
մարդոցմէ աւելի խղճալի ենք: Բայց հիմա Քրիս-
տոս մեռելներէն յարութիւն առած է»: Ու Անի-
կա այս խօսքերը իրարու ետեւ շարեք ապահուն
որոշ հասկացողութիւն ունի, հասկացողութիւն
մը ոչ թէ վարկածի մը, այլ փորձառութեան
մը վրայ հիմնուած աւելի եւս հաստատուած դէպ-
քի մը եւ իրողութեան մը վրայ, որ աշխարհի
մէկ պզտիկ անկիւնին մէջ պատահած չէ, այլ
Նրոսադէմի մէջ ուր խօսուել եւ լուռ բազմաթիւ
ապրող վկաներ կան, սկսեալ գինուորներէն մին-
չեւ քահանաներն ու քահանայապետները:

Այս խօսքերով չէ որ Քրիստոսի յարութեան
փաստարկութեան կը ձեռնարկէ առաքեալը,
ընդհակառակն զայն, որ է անժխտելի իրողու-
թիւն մը, իբր հիմ կ'առնէ անով փաստարկելու
մեզի վերաբերեալ բոլոր հետեւանքները, որոնք
անմիջականօրէն կապուած են Քրիստոսի յա-
րութեան: Եւ իրաւ այնքան մեծ են անոր հե-
տեւանքները մեր կեանքին մէջ եւ անոր շուրջ,
որ մենք ալ առաքեալին հետ պիտի ըսէինք, եթէ
Քրիստոս յարութիւն առած չէ, մեր հաւատքը

պարապ է, բայց մեր կեանքի հետ առնչութիւն
ունեցող իւրաքանչիւր բան այնքան կը կապէ
զմեզ Քրիստոսի հետ, որ չենք կրնար երեւակայել
կեանք մը Քրիստոսի մէջ առանց յարութեան
հիմին:

Սքանչելի ելոյթ մըն էր այն ինչ որ պատա-
հեցաւ ասկէ տասնեակ մը տարիներ առաջ Մոս-
կուայի հրապարակներէն մէկուն վրայ յարու-
թեան օրը: Պօլշեկի տաքզուլու երիտասարդ
մը երկար փաստարկութիւնով կ'ուզէր ապացու-
ցանել թէ Քրիստոս յարութիւն առած չէ եւ թէ
յարութիւնը քրիստոնեաներու մէկ վարպետ ա-
ռասպելական գիւտն է օրօրելու մարդկային միտ-
քը օգային եւ անճիշդ վարկածներով: Երկար եւ
խորամանկ դարձուածքներով եւ խաբող ոճերով
լի այդ բանախօսութենէն յետոյ, բոլորովին
վստահ ժողովուրդին մտքին վրայ տարած իր
յաղթութեան, կը հրաւիրէ զանոնք որպէսզի իր
փաստերուն հակառակ խօսին եթէ կրնան: Ծե-
րունի օրթոտոքս քահանայ մը ձեռք կ'ը վերցնէ
խնդրելով որ խօսի: Բայց հինգ բոլէէն աւելի
չպիտի խօսիս: — Ոչ ալ հինգ բոլէի պէտք պի-
տի ունենամ, պատասխանեց քահանան եւ բեմ
բարձրանալով Ջատկուան առտուան քաղցրանուշ
ներշնչումով եւ հաստատ ոճով մը, «Ժողովուրդ,
Քրիստոս յարեա՛լ ի մեռելոց» ըսաւ: Բոլոր ժո-
ղովուրդը իրենց գլխարկը վար առած պատաս-
խանեցին, «Օրհնեա՛լ է յարութիւնն Քրիստոսի»: Բանախօսը իր պատասխանը ընդունած էր: Ա-
յո՛ւ, այն չփաստարկուի, յարութիւնը իրողութիւն
է: Առանց յարութեան իրողութեան կեանքը կը



ՅԻՍՈՒՍԻ ՆԱՅԻՆՔ

Իմ աչքերս տոմէն տտեն Տէ-
րոջը կը նային, վառնգի իմ սո-
ւերս որովայնէն Ան պիտի հա-
նէ: Սաղ. ԻԵ. 15

(Վեր. Եղոյեան առաջարկեց «Վեր նայէ, վեր» երգը եւ դառ դառ ստքի կայնցուց անոնք որ այս ժողովին մէջ ներկայ եղբայր, հայր, մայր, քույր ունին, նաեւ անոնք որ ունին հայր կամ մայր հոգեւոր: Յանձնարարեց որ երգենք այն-
պէս, որպէս թէ ճիշդ մեր այդ սիրելիներուն կը խօսինք: «Տէրը օրհնէ, ըսաւ, շիտակ ըսողները»: Կարդացուեցաւ 25րդ Սաղմոսը, որուն 15րդ հա-
մարը (բնաբանը) գոց ըսել տուաւ համարձակող-
ներու, յետոյ միաբերան ամենուն):

Քանի մը Սաղմոսներ կան որ ես կը կոչեմ իմ Սաղմոսս: 25, 34, 56, 57, 73: Շատ կը սիրեմ զանոնք, վառնգի իմ փորձառութեանս կը յար-
մարին: Դուն ալ այնպէս ըրէ եւ աղէկ պիտի ըլլայ: Ես, այս Սաղմոսները իմն են ըսելով, քե-
զի չեմ տար ըսել չեմ ուզեր: Այս իմ Սաղմոս-
ներս ես յաճախ կը կարդամ: Դեռ այս առտու
ծունկի եկայ եւ այս Սաղմոսը կարդացի իբր իմ
աղօթքս, ոչ թէ Դաւիթինը. եւ այս սիրած նիւ-
թըս Տէրը ինծի բնաբան տուաւ: Կը հաւատամ
որ Դաւիթ պիտի չբարկանայ քիչ մը փոխելու
համար. ես կը սիրեմ «պիտի հանէ» ըսելու տեղ
կը հանէ ըսել. 56. 3ն ալ «Վախցած օրս Քեզի
կը յուսամ» կ'ըսեմ: Օ', այդ համարը շատ ան-
գին է ինծի:

Ս. Դրքին մէջ «հաւատալ»ը մարմինն բոլոր
զգայարաններով ալ փոխաբերաբար ներկայաց-
ուած է: Օրինակի համար, ամենէն վերի անդա-
մը աչքն է, նայիլը ըսել է հաւատալ: «Յիսուսի
նայեցէք», «Ինծի նայեցէք», ըսել կ'ուզէ հա-
ւատացէք: «Լսեցէք», «մտիկ ըրէք» կը նշանակէ
հաւատացէք: «Ուտել», «կերէ՛ք», «ջօշափել»
եւ այնպէս ամէն ուրիշ մարմնի անդամներու զոր-
ծառնութիւնները հաւատալու համար փոխաբե-
րաբար ըսուած են: Սորվե՞ր ես այսպէս ամէն ա-
տեն Տէրոջը հաւատալ: Միայն կո՛ւշտ ատեն թէ
անօթի ատեն ալ Տէրոջը կը հաւատաւ: Մէկը
չի կրնար գիտնալ Տէրոջը վստահելուն քաղց-
րութիւնը, եթէ այսպէս Տէրոջը նայելու չէ վար-
ժուած:

Յիսուսի նայելու երեք կողմեր կան — նայիլ

խաչին վրայ, նայիլ Հօրը աջ կողմը, նայիլ զա-
լու ամպերուն վրայ:

Թուոց ԻԱ. 4-9: Իսրայելացիք տասներորդ
անգամ կը տրտնջեն: Այս անգամ ալ ջուրի հա-
մար: Հաւատացեալներ կը տրտնջին երբ կարօ-
տութիւն մը ունենան: Տրտունջը փոխանակ ցա-
ւերը մեղմելու, պատճառ կ'ըլլայ ցաւերուն ա-
ւելի սաստկանալուն: Տրտունջը Աստուծոյ առջև
ծանր յանցանք է, ուստի չտրտնջելու համար,
Աստուած հաւատացեալին ուղածը կուտայ: Բայց
մեզի աւելի աղէկ է զօրութիւն առնել Տէրոջմէ՛
կարօտութեանց եւ ցաւերու դիմանալու համար:
Որչա՛փ ցաւալի է քրիստոնեաներու վիճակը որ
ջուրի կամ այսպիսի բաներու համար կը տրտն-
ջեն: Տրտունջը օձի պէս պատիժ կը հրաւիրէ
մարդուն վրայ: Օձեր զրկեց անոնց վրայ, թու-
նաւոր օձեր: Ժողովուրդը Աստուծոյ աղաչեց եւ
Մովսէս ալ Աստուծոյ աղօթեց, սակայն Աստուած
օձերը չվերցուց, հապա պատուիրեց որ պղնձէ
օձ մը շինէ ու ձողի մը վրայ դնէ եւ օձերէն խած-
ուողը անոր նայի:

Տէր Յիսուս Քրիստոս այս պատմութիւնը Ի-
բեկ իբրեւ օրինակ կը գործածէ (Յովհ. Գ. 14, 15):
Օձը կը ներկայացնէ Սատանան, թոյնը՝ մեղքը,
թունաւորութիւնը՝ մեր մեղաւորութիւնը, եւ թու-
նաւորութիւնն եթէ օգնութիւն չգայ, կը մեռնինք:
Օձի նմանութիւնով ուրիշ մէկը պիտի գայ, օձի
կերպարանք չառաւ, բայց օձի պէս պատժուե-
ցաւ: Անիկա բուն մեղք եղաւ (Բ. Կոր. Ե. 21 լու-
սանցք): Ես չեմ գիտեր ինչպէս, բայց Աստուած
զԱնիկա պատժեց: Ահա սիրելիներ, Հազարամե-
այի ժամանակ բոլոր կենդանիները պիտի փոխ-
ուին, բայց օձը պիտի չփոխուի, իր օձի բնու-
թիւնը պիտի չկորսնցնէ, թէեւ պիտի չկրնայ
խածնել: Սատանան կապուած պիտի ըլլայ: Բո-
լոր մեղաւորներուն խաչեալ Յիսուս Քրիստոսով
փրկութիւն կայ, Անոր նայողը կը փրկուի: Նա-
յելու համար երկար ժամանակ պէտք չէ, հա-
ւատա եւ կը փրկուիս, եթէ տասը, քսան, երե-
սուն, յիսուն տարի չհաւատացիր, չես փրկուիր,
բայց նայածիդ պէս կը փրկուիս: Անոր նայածին
պէս կ'առողջանայ, նայածին պէս կը փրկուի:
Ես չեմ գիտեր ինչպէս, բայց Աստուծոյ կեր-
պը այս է: Մենք կ'ըսենք թէ փրկուած ենք եւ
շատեր կը զարմանան: Ինչո՞ւ կը զարմանան.
Աստուած կ'ըսէ ու ես կը հաւատամ:

Երկրորդ նայուածքը այն է որ մէկը կը հա-
ւատայ որ Յիսուս մեռելներէն յարութիւն առած
է եւ երկինքը Հօրը աջ կողմը նստած է ու կը
բարեխօսէ: Յիսուսի նայելու է նախ որպէս խաչ-

եբլ, ապա որպէս Բարեխօս: Մէկ սորվելիք բան — Յիսուս միայն հաւատացեալներուն համար կը բարեխօսէ եւ ոչ թէ մեղաւորներուն համար: Ան որ խաչեալ Յիսուսի չի հաւատար, օգուտ չունի որ կը հաւատայ բարեխօսութիւն ընողին: Մէկ անգամ Միջնորդ եղաւ, կը բարեխօսէ ամէն ատեն: Բարեխօս Յիսուս Քրիստոս, իմ աչքերս ամէն ատեն Բեզի կը նային: Այս շատ կարեւոր է որ հաւատացեալ մը բարեխօսութեան համար Յիսուսի նայի: Դուն կրնա՞ս ըսել իմ Բարեխօս: Կարգանք Ա. Յովհ. Բ. 1, 2, «Իմ որդեակներս», չըսեր ոեւէ մարդ, «այս բաները ձեզի կը գրեմ որպէսզի մեզ չգործէք, եւ եթէ մէկը մեզ գործելու ըլլայ, Հօրը քով Բարեխօս ունինք Յիսուս Քրիստոս Արդարը: Եւ Անիկա մեր մեղքերուն քուտլութիւն է, եւ ոչ թէ միայն մերիններուն, հապա բոլոր աշխարհի ալ»: Բոլոր աշխարհի մեղքերուն քուտլութիւն, բայց միայն հաւատացեալներուն Բարեխօս: Խաչին վրայ քուտլութիւն, բայց երկինքը քուտլութեան տեղ չէ: Տէր Յիսուս Իր մահէն քանի մը ժամ առաջ Յովհ. Ժէ. զլիսուն աղօթքը մատուց: Ես փառք կուտամ այս աղօթքին համար, անիկա բարեխօսական աղօթք մըն է: Տեսէք ինչ կ'ըսէ, «Ես անոնց համար կ'աղաչեմ, ոչ թէ աշխարհի համար կ'աղաչեմ»: Աշխարհի համար կը մեռնի, արիւնը կը թափէ, կը միջնորդէ, բայց չի բարեխօսեր: Եւ ինչո՞ւ պիտի բարեխօսէ մեզի համար. անոր համար որ թէեւ փրկուած ենք ու դատապարտութենէ ազատուած ենք, բայց կարելի է որ մեղանչենք: Կան մարդիկ որ կը կարծեն թէ քանի որ փրկուած են, ալ չեն մեղանչեր: Այդպէս չէ: Քանի որ մարմնի մէջ ենք, միշտ միտում ունինք մեղանչելու: Եթէ չենք մեղանչեր, ալ ինչո՞ւ պիտի բարեխօսէ. այսպէս խորհիւ Տէրոջը բարեխօսութիւնը պարապ բան նկատել է: Ո՛հ, ըզզուշացէք երբոր այսպէս կ'ըսէք:

Տէրոջը բարեխօսութիւնը ինծի համար շատ միխթարական է: Շատ անգամ ես չեմ գիտեր ինչպէս աղօթելու եմ, ուստի կ'ըսեմ որ ես չեմ կրնար աղօթել, Քու Որդիդ կ'աղօթէ, մտիկ ըրէ Իրեն: Ամէն: Կ'ըսէ՞, հապա դուն չաղօթեցիր: Չէ՛: Ո՛հ, այս պատուական աղօթք մըն է:

Հաւատացեալներու մեղանչելուն մասին երեք տեսակ համոզում կայ:

1. Կ'ըսեն թէ մեղքը սրտէն «արմատէն» կ'ելլէ: Որքան սխալ: Մեղքը իրենց մէջ է, չեն տեսներ: Ես կը ճանչնամ այս համոզմամբ հաւատացեալներ, որոնք շարունակ կը վիճին, եւ վիճաբանութեան տաք ատեններն մեղ-

քը իրենց դէմքին վրայ կարմիր գոյն կ'առնէ, դեղին գոյն կ'առնէ:

2. Մեղքը զսպելու զաղափարը: Ոմանք ալ կ'ըսեն, թէեւ մեղքը մեր մէջէն արմատէն չելլեր, բայց զանիկա կը զսպենք: Իրաւ է, մարդ շանքով կը յաջողի մէկ երկու անգամ մեղքին յաղթելու, բայց միշտ մեղքի դիմադրել անկարելի է: Եւ մարդ ինչպէս պիտի դիմադրէ սրտէն եկած մեղքերուն: Եթէ սրտիդ մէջ ըսիր, այդ միեւնոյնն է Աստուծոյ առջեւ:

3. Կ'ընդունի թէ մեղանչական ընութիւնը իր մէջ կը մնայ, բայց Յիսուսի կը նայի ամէն ատեն: Խօսքը, Քրիստոս եւ Ս. Հոգին մեղքը կը յաղթահարեն: Խիստ պատուական է նայիլ Քրիստոսի, Որ Բարեխօս է Հօրը աջ կողմը:

Երբորդ կէտը այն է որ հաւատացեալը կը նայի Քրիստոսի, Անոր երկրորդ անգամ զալուստին: Հիմա քանի որ Սատանան կը գործէ, մեր մարմինը ենթակայ կ'ըլլայ մեղքի: Սուրբ Հոգին ալ կը զործէ, ուստի երբ խոստովանինք, Հայրը կը ներէ Յիսուսի բարեխօսութեամբ: Բայց մենք կը բաղձանք եւ կը սպասենք այն օրուան երբ պիտի ազատինք մեզ գործելու հնարաւորութենէն: Յիսուս պիտի բերէ մեր վերջնական եւ կատարեալ փրկութիւնը: Պիտի աղատէ մեզ մեղքի գոյութենէն: Պիտի տայ փառաւոր եւ անապական մարմին մը որ բնաւ ենթակայ չըլլար մեղքի: Այս նախաւածքը կ'ուղղուի փառաւորեալ Յիսուսի, որ Անիկա մեզ ալ շուտով փառաւոր ընէ Իր քովը: «Ամէ՛ն, եկուր, Տէր Յիսուս: Հոգին ու հարսը, այսինքն Սուրբ Հոգին ու եկեղեցին այս օրուան համար կ'աղօթեն: Իսկ դուն կ'աղօթե՞ս Դուն պատրաստ ես: Յիսուսի նայեցէք ու պատրաստ կեցէք: Առաքեալը կ'ըսէ, «Յիսուսի նայինք, մեր հաւատքին առաջնորդին ու կատարողին, որ այն ուրախութեանը համար որ Իր առջեւ կեցած էր, խաչը յանձն առաւ, ամօթը արհամարհեց եւ Աստուծոյ աթոռին աջ կողմը նստաւ» Եբր. ԺԲ. 2:

«Իմ աչքերս ամէն ատեն Տէրոջը կը նային, վասնզի իմ ստքերս որոգայթէն Ան կը հանէ (կամ պիտի հանէ)»:

(Վեր. Ա. 2 ԵՂՈՅԵԱՆ)

Այս քարոզը խօսուեցաւ Մարտէյի մէջ եւ «Շնորհաց օգիւր»ի հեղինակին լեւոն եղբ. Սիմոնեանի կողմէ իր գրքոյկին մէջ հրատարակուեցաւ, որմէ կը քաղենք զայն:

«Շնորհաց օգիւր»ը կ'ամօք ունենալ եւ կարգաւ: Օգտակար կ'ըլլայ: Գինն է՝ 2 ֆրանք: ԽՄԲ.

ԳՈՂԳՈԹԱՆ

Ու տարին զԱնիկա ԳՈՂԳՈԹԱ ըստուած տեղը,
որ կը թարգմանուի Գանկի տեղ:

Մարգ. ԺԵ. 22

Ընկերոջս՝ Սուրեն Թաթևյանին

I

Գողգոթա՛ն, Գողգոթա՛ն,
Հոգեցունց, վիթխարի, մե՛ծ Ատեա՛ն...
Ուր Աստուած՝
Դարերով կուտակուած,
Համապիղծ եւ ըմբոստ մարդկութեան անօրէն,
Համօրէն՝
Անքանակ մեղքերու,
Յանցանքի, ոճիրի անարկու
Դատն անա՛ կը վարէ...
Եւ բաբէ՛,
Գողգոթա՛ն
Դատաստա՛ն:
Հոն Աստուած,
Անյեղի Օրէնքին Գիրքը բաց,
Մահապարտ ամբոխին տեղ անա
Անխնայ,
Անկոտորում, անկաշառ կըշիռով երկաթէ՛
Ադամին ցեղակցող Իր Որդին կը զատէ՛:
Վըճիռը լսեցէ՛ք, վըճիռը եւ անա՛
— Ամէնգործ վարձք մ'ունի, մեղքին աղ վարձքը մահի:
Գողգոթա՛ն,
Մե՛ծ ԱՏԵԱՆ:

II

Գողգոթա՛ն, Գողգոթա՛ն, Գողգոթա՛ն,
Բովանդակ մեղաւոր մարդկութեան
Կառափնա՛տ...
Բայց Աստուած Իր Որդին որպէս Դառ անարատ,
Աշխարհի պատիժը եւ մեղքը ուսերուն,
Կը կապէ զո՛հի սուրբ սեղանի փայտերուն
Եւ ա՛յնտեղ՝
Իր անեղ
Օրէնքին սըրովը երկսայրի,
Կ'ըզգետնէ որ ալքի՛...
Եւ անա երկինքէն իր անպարտ Զոհին վրայ՝
Թէ՛ անէծք, թէ՛ բըռունցք, թէ՛ կըրակ կը տեղայ...
Արդարը կը մեռնի՛
Որպէսզի մահապարտ մեղաւորը ապրի:
Գողգոթա՛ն, Գողգոթա՛ն,
ՍԻՐՈՅ ՄԵ՛ծ ԱՊԱՍՏԱՆ:

III

Գողգոթա՛ն, Գողգոթա՛ն, Գողգոթա՛ն,
Գերազոյն պայքարի, մեծապանծ յաղթութեան
Ռազմադա՛շտ...
Ուր անհաշտ՝
Աստուծոյ եւ անկեալ մարդկութեան թշնամին,
Իր բոլոր դժոխիկ գունդերով դիւային
Յաղթահար՝
Ալ ցըվերջ շըջեցաւ զըլիւզար:
Յաղթութի՛ւն...
Յընձութի՛ւն...
Վը լըսուի Պարտեալին հոգեճայթ հըրոնթիւն,
Պարտութի՛ւն, պարտութի՛ւն...
Հին Օձը իր գանկէն Զախլախուած է անբոյժ:
Դեւերու բանակն է զետնահար եւ անուժ:
Դըժոխքի ամրակուռ հիմքերը կը դողա՛ն,
Եւ մեղքի եւ մահուան դարաւոր սեւ շղթան
Կը քակուի առ յաւէտ:
Յաղթութեան արփաւէտ
Սյգն անա կը ծագի՛...
Թո՛ւ ծագի՛:
Գողգոթա՛ն, Գողգոթա՛ն,
ՌԱԶՄ ԱԴԱՇՏ ՅԱՂԹՈՒԹԵԱՆ:

IV

Գողգոթա՛ն, Գողգոթա՛ն, Գողգոթա՛ն,
Աստուծոյ մեծաբաշխ եւ ձըրի փրկութեան
Վեհ կոթո՛ղ...
Ուր՝ անա երկինքէն մինչեւ հող
Հաստատուած արիւնոտ շընորհքի սանդուխէն՝
Սիրազեղ, մեծաթիռ ճաճանչ մը լուսեղէն
Կ'այգօծէ գիշերը: Սեւ քօղը կը պատոհի՛...
Թո՛ղ պատոհի՛:
Բաժանման մեղսահիւս պատուարը կը քակուի՛...
Թող քակուի՛:
Եւ անա հայրաբար Աստուած վար կը փութայ
Գրկելու, սեղմելու սիրաշերտ կուրծքին վրայ,
Իմ ցեղըս հոգեվար, իմ ցեղըս մահապարտ:
Բայց անպարտ:
Զի Որդին Աստուծոյ, Եղբայրը մարդկութեան,
Ինք ուսեց անվարան
Մեղքը ողջ աշխարհի,
Եւ խուժգուժ մահուան դառն պատիժը ամենի:
Կ'ըզմայլի՛մ,
Կ'ըզմայլի՛մ:
Աստուծոյ գորովոտ սիրտն անա յորդանոս,
Անսահման շընորհքի եւ սիրոյ ովկիանոս...
Տեսէք Հայրն Իր Որդւոյն մէջ ցեղըս համբուրեց-
Ո՛հ, համբոյր այնքան սուրբ, այնքան տաք,
այնքան մե՛ծ...

Ո՛հ համբոյր,
Կենսաբո՛յր...
Որուն տակ՝ մեղքերու եւ արդար ամօթի
Սեւ լեռը կ'անհետի՝
Ի՛նչ հըրաշք, Հաշտութեան, թողութեան,
Հայրութեա՛ն...
Գողգոթա՛ն, Գողգոթա՛ն,
ԿՈԹՈՂ ՄԵԾ ՓԸՐԿՈՒԹԵԱՆ:

V

Գողգոթա՛ն, Գողգոթա՛ն, Գողգոթա՛ն,
Է՛ն հըսկայ եւ է՛ն սուրբ բե՛ւր նոր պատմութեան,
Ուր՝ հոգին Աստուծոյ սաստկաշունչ հովի պէս՝
Կը գոցէ Սինայի մեծ Գիրքը բոցակէզ.
Եւ ահա կը բացուի նոր էջը Սիօնի
Գեղանի՛...
Գողգոթա՛ն, Գողգոթա՛ն,
Բեմ վըսեմ հաշտութեան,
Ուր Աստուած՝
Գորովատ Հօր մը պէս զըրկաբաց՝
Կը կ'անչէ, կը կ'անչէ անձկութեամբ մ'աղեխարշ,
Մահատիպ, խոտորեալ իմ ցեղըս գետնաքարշ:
Եւ ահա՛
Աստուծոյ հրաւերն կ'անհուննա՛յ
Օղին պէս անպարփակ,
Լոյսին պէս անապակ,
Կ'անհուննայ քառաթեւ հովերուն պէս արագ
Ծագէ ծա՛գ, ծագէ ծա՛գ:
Շընորհքն է անսահման, շընորհքն է անյատա՛կ,
Ամենուն, ամենուն փրկութեան զըրօշակ:
Գողգոթա՛ն, Գողգոթա՛ն,
Բեմ՝ անխախտ փրկութեան:
Բեմ՝ ուրկէ անողորմ օրէնքին տեղ ահեղ,
Կենարար Շընորհքին պատգամը փառահեղ,
Որպէս ջուր, որպէս լոյս յորդառատ կը հոսի...
Թո՛ղ հոսի՝
Գողգոթա՛ն, Գողգոթա՛ն,
ԲԵՄ՝ ԽԱՉԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ:

VI

Գողգոթա՛ն, Գողգոթա՛ն, Գողգոթա՛ն,
Հըրաշէկ լո՛կ քուրայ ճշմարիտ սըրբութեան.
Ուր Աստուած
Ոսկերի՛ջ՝ իր վառած
Մէջը սուրբ հըրաբորբ կըրակին
Կը զըտէ իր Գանձը, արծաթը եւ ոսկին:
Եւ ահա՛
Այլամերժ վարպետը անխընայ,
Կ'արձակէ վըճիռը անագին, պըղինձին,
—Ամէն աղտ եւ արատ մէջը սուրբ հալօցին,

Պէտք է որ հիմնովին
Սպառի՛ն...
Գողգոթա՛ն, Գողգոթա՛ն,
Կատարեալ մաքրութեան
Քաւարար լուսաղբիւր մշտահոս,
Ուր ամէն մեղաւոր, հրեալ թէ հեթանոս
Կըրնայ հոն մաքրուիլ քան զձիւն անարատ
Զի անդուլ. յորդառատ
Սուրբ արեան եւ ջըրոյ հեղեղը կը հոսի
Կողէն Տէր Յիսուսի:
Գողգոթա՛ն, Գողգոթա՛ն,
Տուն անբիծ սըրբութեան,
Ուր Հայրը կը փաթթէ Իր որդին անառակ
Լուսազգեստ բեհեզով, ձիւնաթո՛յր, սպիտա՛կ:
Գողգոթա՛ն, Գողգոթա՛ն,
ԼՈԿ ՔՈՒՐԱՅ ՍԸՐԲՈՒԹԵԱՆ:

VII

Գողգոթա՛ն, Գողգոթա՛ն, Գողգոթա՛ն,
Սովամահ կորնչող կենսազուրկ մարդկութեան՝
Աստուծոյ ձեռքերով յարդարուած պերճ Սեղան,
Ուր անվերջ կը տեղան
Կենսատու շընորհքներ եւ Մանը երկինքի.
Վայր օրհնեալ խընճոյքի:
Եւ ահա՛
Զմայլած յուզումէն կը դողայ
Մեղաւոր փրկեալը, իր Փրկիչ Աստուծոյն
Սիրոյն մէջ գերագոյն...
Հո՛ն երկինք եւ երկիր գիրկընդխառն,
Բերկրանքի մէջ անխառն,
Հո՛ն անթիւ ձիւնազգեստ հրեշտակներ անբասիր,
Հո՛ն համայն բնութիւն եւ աստղերք լուսածիր,
Շըրջապար, միածափ, համօրէն
Կ'օրհներգեն,
—Գահութի՛ւն,
Օրհնութի՛ւն,
Փա՛ռք գէնեալ Գառնուկին,
Փա՛ռք կըրկին եւ կըրկին...
Եւ ահա տիեզերքն կուտայ մեծ արձագանդ:
Խըրախճա՛նք, խըրախճա՛նք...
Ամէն կողմ երգ ու լո՛յս,
Ամէն կողմ սէր եւ յո՛յս:
Գողգոթա՛ն, Գողգոթա՛ն,
Եզակի բարձըր վայր բազմամբոխ օրհնութեան,
Ուր Սէ՛րճ գերազանց
Մեր վըրայ ծածանող դրօշն է գեղապանծ:
Ի՛նչ խընճոյք,
Ի՛նչ հաճոյք:
Գողգոթա՛ն, Գողգոթա՛ն,
ՍԵՂԱՆ ԼԻ ԽԸՆԴՈՒԹԵԱՆ:

ՍԱՄՈՒԷԼ Պ՝

ՍՈՒՐԲ ԹԳՈՍՏԻՆՈՍԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

— — —

ԳԻՐԲ ԺԳ. ԳԼՈՒԽ ԺԲ.

Կատարելութեան ճամբան

Բայց նախ լուսացուցէ՛ք, ձեր սրտերէն եւ իմ աչքերէն ամէն պղծութիւն վերցուցէ՛ք որպէսզի ցամաքը երեւան դայ(1): Սորվեցէ՛ք բարին գործել, որքին արդարութիւն եւ որբեւարին իրաւունք ըրէ՛ք որպէսզի ցամաքը ծածկուի բերրի արօտներով եւ պտղատու ծառերով: Եկէ՛ք, սորվեցնեմ ձեզի, երկնից հաստատութեան(2) կապուելով աշխարհի լուր պիտի ըլլաք:

Հարուստը, բարի վարդապետին կը հարցունէ թէ ի՞նչ պէտք է ընէ յաւիտեանական կեանքը ժառանգելու համար: Լսէ՛ այդ բարի Վարդապետին որ թերեւս մարդ մը կը կարծես միայն եւ ոչինչ աւելի, բայց որ բարի է, վասնզի Աստուած է: Ան կ'ըսէ, «Եթէ կ'ուզես կեանքի հասնիլ, պատուիրանքները պահէ, սրտիդ հողէն զատէ նենգութեան եւ ապականութեան լեղի ջուրերը, մարդասպանութենէն զզուշացիր, շնութիւն, գողութիւն, սուտ վկայութիւն մի ընէր որպէսզի ցամաքը երեւան դայ եւ ծլեցնէ հօր եւ մօր պատուիրանքը եւ ընկերոջ հանդէպ եղած սէրը»:

— Այդ բոլորը ըրի, կ'ըսէ հարուստը:

— Ուսկից կուգան ուրեմն այնքա՛ն փուշեր՝ Գնա արմատախիլ ըրէ ազահութեան այդ վայրի մացառները, ծախէ՛ ունեցածդ, աղքատներուն տուր ու քու ողորմութիւնդ պտուղներով պիտի ծածկէ քեզ եւ երկինքը զանձ պիտի ունենաս: Ապա Տէրոջը հետեւէ, եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ եւ դառնալ ընկերը անոնց որոնց իմաստութեան լեզուն կը խօսի Ան, որ զիտէ եւ քեզի պիտի սորվեցնէ թէ ինչ է ցորեկը եւ ի՞նչ է գիշերը, որպէսզի քեզի համար ալ տեղ մը կենայ երկնից հաստատութեան մէջ, ինչ որ անկարելի

.....

(1) Իր խոստովանութիւններուն ժԳ. այսինքն վերջին գրքին մէջ Օգոստինոս մասնաւորաբար կը ծանրանայ Մր. նընդոց գրքին ստեղծագործութեան պատմութեան վրայ հետզհետէ խորհրդանշական այլաբանական մէթոտով կը մեկնէ զանոնք, յարմարցնելով հոգեւոր իրողութիւններու: Այս մեկնութիւնները յաճախ բարդ, դժուարիմաց եւ անտարակոյս ինդրական են: Վերեւի հաստատում ալ կարգալու է այս լոյսին մէջ:

(2) Ուրիշ տեղ մը Օգոստինոս երկնից հաստատութիւնը Աստուծոյ խօսքին կը նմանցնէ այլաբանօրէն:

բան է, եթէ արդէն սիրտդ հոն չէ, եթէ հոն չէ քու զանձդ ինչպէս քեզի ըսաւ բարի Վարդապետը: Սակայն տրամութիւնը տարածուեցա՛ւ անպտուղ հողին վրայ եւ փուշերը խօսքը խեղդեցին:

Ձեզի համար, ընտրեալ ցեղ, աշխարհիս տը կարները, դուք որ ամէն բան թողուցիք Տէրոջը հետեւելու համար, գացէ՛ք ու ամէնցուցէ՛ք այս աշխարհին իշխանութիւնները: Թող ձեր լուսատու ոտքերը իր հետքերուն վրայ քալեն, փայլեցէ՛ք հաստատութեանը վրայ, որպէսզի երկինք Աստուծոյ փառքը պատմեն, զանազանելով կատարեալներուն լոյսը (որոնք դեռ շատ հեռու են հրեշտակաց լոյսէն) եւ մթութիւնը պզտիկներուն՝ որոնք արդէն փրկուած են ձեր արհամարհանքէն: Փայլեցէ՛ք բոլոր երկրի վրայ, թող ցորեկը շլացուցիչ այս արեւին լոյսերով, օրուան պատմէ իմաստութեան Բանը եւ թող այս գիշերը ըլլայ այն լուսնի շաղերը որոնք գիշերուան կը պատմեն գիտութեան Բանը:

Լսւինք եւ աստղերը գիշերուան մէջ կը ցուան առանց մթննալու խաւարէն: Անոնք գիշերին կուտան այն բոլոր լոյսը, որ նա կրնայ ընդունիլ, եւ ինչպէս Աստուած բաժնէ ըլլար «Երկինքի հաստատութեանը վրայ աստղեր ըլլան, ահա յանկարծ երկինքէն ձայն մը եղաւ սաստկաշունչ հովի մը ձայնին պէս եւ բաժնուած լեզուներ երեւցան որպէս թէ կրակէ եւ ամէն մէկուն վրայ նստաւ»: Եւ կազմուեցաւ իբր թէ աստղերու հաստատութիւն մը, որոնք կենաց Բանը ունէին:

Վազեցէ՛ք ամէն տեղ, սրբութեան բոցեր, հուրք հիանալի, վասնզի դուք աշխարհի լոյսն էք եւ զրուանը ձեզ չծածկեր: Այն, որուն դուք կցուած էք, բարձրացուած է փառքի մէջ եւ ձեզ ալ բարձրացուցած, վազեցէ՛ք ուրեմն եւ յայտնուեցէ՛ք բոլոր ազգերուն:

ԳԼՈՒԽ ԼԵ.

Տէր, Քո. խաղաղութիւնդ տուր մեզի

Մեր բոլոր բարեաց Աղբիւրը, Տէր իմ Աստուածս, Քու խաղաղութիւնդ տուր մեզի: Քու հանգստեանդ խաղաղութիւնը, քու շաբաթիդ խաղաղութիւնը, խաղաղութիւնդ որ անկում չունի ինչու որ այնքան պատուական արարածներու գեղեցիկ ներդաշնակութիւնը ու հիանալի կարգ ու սարքն պիտի անցնին այն օրը, երբ իրենց նըպատակը լեցուած լրացած ըլլայ: Իրենց գիշերը պիտի ունենան, ինչպէս իրենց առաւօտը ունեցան:



Քեզ ՊիՏի Գովես

Շատ ժողովուրդի առ-
ջեւ Քեզ պիտի օրհնեմ:
Սաղ. ԼԵ. 18

Տէրը այնքան բարիքներ ըրած է ինձի որ
Դաւիթը բռնկեցնող երախտագիտութեան հոգին
զիս ալ կը մղէ աղաղակելու, «Եւժ ժողովքին
մէջ Քեզ պիտի գովեմ, շատ ժողովուրդի մէջ
Քեզ պիտի օրհնեմ, վասնզի շատ են քու սքան-
չելիքներդ ով իմ՝ Տէր Աստուածս... պիտի համ-
բէի ու խօսէի. բայց համբանքէն աւելի շատ են»:

Վկայելու համար կեանքիս բազմաթիւ պա-
րագաներէն միայն չորս կէտեր կ'ուզեմ վեր առ-
նել, որոնք սիրտս մասնաւոր շնորհակալութեամբ
կը լեցնեն առ Աստուած:

Առաջինը Աստուծոյ նախախնամական ծրա-

ԳԼՈՒԽ ԼԷ.

Աստուած ինչպէս կը հանգչի մեր մէջ

Յայնժամ քու հանգիստդ մեր մէջ պիտի ըլ-
լայ, ինչպէս այսօր Քու գործերդ մեր մէջ: Եւ
մեր հանգիստը Քու կինդ պիտի ըլլայ, ինչպէս
այսօր մեր գործերը Քու կիններդ են, ինչու որ
Դուն Տէր, միանգամայն յաւիտենական շարժումն
ու հանգիստն ես: Քու տեսութիւնդ, Քու գործելդ,
Քու հանգիստդ ժամանակ չեն գիտեր, Դուն ժա-
մանակը կը շինես, եւ հանգիստն ալ որ մեզ ժա-
մանակէն դուրս կը հանէ:

ԳԼՈՒԽ ԼԸ.

...Եւ մարդ կրնայ մարդու տալ փառաց զաղտ-
նիքներուն բացատրութիւնը: Հրեշտակը հրեշ-
տակին, կամ հրեշտակը մարդուն կրնայ: Ո՛չ,
միայն քեզի է որ պէտք է հարցնել, Քու մէջդ
պէտք է փնտռել. նոյն ինքն Քեզի է որ պէտք
է բաղխել, այսպէսով կարելի է ընդունիլ, այս-
պէսով կարելի է գտնել եւ ներս մտնել:

Քաղուածաբար

Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ

Փարիզ

(Վերջ)

գիրն է, որուն համար պէտք է զԱյն գովեմ շատ
ժողովքի մէջ: Ծնած եմ խարբերդ, խոյլու զիւ-
ղը, հոգեւոր ծնողքէ: Հայրս (Պատ. Ասատուր
Թովուզեան) հոգեւոր պաշտօնեայ էր, մայրս ալ
ուսուցչուհի: Երկուքն ալ բոլորանուէր ջանքերով
Տէրոջը կը ծառայէին շեքեանդութեամբ: Աս-
տուծոյ իրենց տուած ութը գաւակները Աստուա-
ծաշունչի հոգիովը դաստիարակելու մէջ երբեք
չթերացան: Ճիշդ այս պատճառաւ մեր յարկին
տակ լոյս ու սէր, երգ ու աղօթք կար շարունակ:
«Արդարներուն բնակարանն լուսն մէջ ցնծութեան
եւ փրկութեան ձայն կայ»: Արդարեւ ի՞նչ մեծ
շնորհք, խորհած եմ յաճախ որ հեթանոսս եւ
կռապաշտ ընտանիքէ մը սերած չեմ, որ ո՛չ
Քրիստոսի փառաւոր Աւետարանին լոյսը Թափան-
ցած է, ոչ ալ Աստուծոյ փրկարար սիրոյն աւե-
տիսը լսուած է: Այլ ծնած եմ սուրբ յարկի մը
տակ եւ ճշմարտապէս Աստուածապաշտ ծնողքէ
մը որոնք զիս ի մանկանց Տէրոջը վախին մէջ
մեծցուցին: Փա՛ռք Քեզի ով Հայր, նախախնա-
մական այս օրհնեալ ծրագրիդ համար:

Հայրս՝ իր հոգեվարքի պահուն, երբ տեսաւ
մայրս ութը գաւակն ով զինք շրջապատած,
խաղաղութեամբ մեզ օրհնեց ու ըսաւ «Որքե-
րուն եւ որբեւարներուն Տէրը Աստուած է»: Գեր-
ման եւ Ամերիկեան միսիոնարներ, հօրս թաղու-
մը ընկէն վերջ, եղբայրներս Ամերիկեան շէն-
քը դրին, զիս ալ մեծ քրոջս հետ Գերման աղ-
ջըկանց որբանոցը փոխադրեցին: Այս ալ ան-
կասկած Աստուծոյ կարգադրութեամբը եղաւ, որ-
պէսզի մեր մէջ ցանուած բարի սերմերը ուռճա-
նալով բարի պտուղ յառաջ բերէին: Եւ այսպէս
ալ եղաւ: 15 տարի Տէրը զիս այդ օրհնեալ յար-
կին տակ բարերարեց: Մեր ընդհանուր վերա-
տեսչուհին էր Թանթէ Կատարինէ անունով գեր-
ման միսիոնարուհի մը, որ Սուրբ Հոգիով լեց-
ուած Տէրոջը մէկ ժրաջան աղախինն էր:
Անոր սուրբ կեանքը, անմահ հոգիներու հանդէպ
ցուցուցած մեծ սէրը եւ Խօսքին պարզ քարո-
զութիւնը խորունկ ազդեցութիւն գործեցին սրբ-
ախ վրայ: 16 տարեկան էի երբ Տէրը այցելեց
ինձի այս աղախինին միջոցաւ եւ ես բոլոր
մեղքերս ճանչնալով Փրկչիս յանձնուեցայ: Ան-
միջապէս որ մեղքերս խոստովանեցայ, սիրաս
ճշմարիտ եւ խորունկ ուրախութիւնով լեցուե-
ցաւ, ու ես կրցի երգել. —

Խաղաղութիւն ունիմ Անով,

Իր սուրբ արեան արժանիքով,

Է Բարեխօս Աստուծոյս քով

Սիրովն անճառ անբաւաւ.

Այս՝ երկրորդ կէտն է, որուն համար անհուն շնորհակալութիւն կը յայտնեմ Աստուծոյս եւ Փրկչիս Յիսուս Քրիստոսի ուր յաւիտեան օրհնեալ է: «Քու փրկութիւնդ սիրողները ամէն ժամանակ թող ըսեն Տէրը մեծանայ»:

Եւ ահա այն Զեմբլ որ զիս հայրօրէն այս հոգեւոր շրջանակին մէջ տեղաւորեց ինծի իր փրկութիւնը եւ ողորմութիւնը ցուցնելու համար, նոյն Զեռքը զիս անկէ առաւ հեռաւոր տեղեր առաջնորդելու համար: Բաժանման օրը հասաւ: Վերջին տեսութեան մը համար հաւաքուող սեղանակից քոյրերուս առջեւ հրաժեշտի մէկ երկու խօսք ըսի, աւելի ճիշդը համառօտ վկայութիւնս էր որ անոնց առջեւ զրի, պատմելով այն որ «Տէրը ինծի ըրաւ ու ողորմեցաւ»: Թանթէ կատարինէն դորովոտ մօր մը յուզումովը աղօթեց եւ 286րդ երգը երգելով բաժնուեցայ այն անձերէն եւ այն յարկէն որոնք ինծի մնայուն օրհնութիւններու պատճառ եղած էին: Մինչ Տէրը զիս դէպի Հիւս. Ամերիկա կ'առաջնորդէր, ծովազնացութեան ընթացքին հոգւոյս խորը միշտ կը լսէի արձապանգը հրաժեշտի նուիրական երգին:—

Ճամբաս Դուն Տէր, ընտրէ,
Թող ինձ խաւար ըլլայ,
Զեռքովդ առաջնորդէ,
Ընտրէ ինծի ճամբայ:
Ես չեմ համարձակիր
Բընաւ վիճակս ընտրել.
Դուն կ'առավարս եղիր,
Սորովիմ շիտակ քալել:

Այսպէս Տէրը հակառակ ամէն արգելքի եւ բազմաթիւ վտանգներու, ապահովութեամբ զիս իր որոշած տեղը հասցուց: Հոն իր շնորհքովը աւուանացայ: Ընտանեկան սուրբ եւ երջանիկ բոյն մը կազմեցի: Տէրը ինծի զաւակներ ալ տուաւ: Օրհնեալ ըլլայ Տէրը իմ հովիւս: Անդրանիկ տղասս ասկէ ութը տարի առաջ ծանր եւ մահացու հիւանդութեամբ բռնուած հիւանդանոց փոխադրուեցաւ: Կմախացած տղոս անդամները քաշուեցան եւ լեզուն առնուեցաւ: Բժիշկները եւ հիւանդապահուհիները անյոյս էին անոր բժշկութեան շուրջ: Մինչ զաւակս հոգեվարքի մէջ էր եւ ամէն զինք ճանչցողները յուսակաւոր եղած էին, ես՝ «Սեր ցաւերը կրող եւ մեր հիւանդութիւնները բժշկող» Տէրը առջեւ ծունկի եկայ արտասուքով: Տէրը լսեց իմ աղօթքս եւ իմ լալուս ձայնը: Որդիս բժշկուեցաւ: Զայն դարմանող բժիշկը խիստ հպարտ էր կարծելով ինչ իր ճարտարութեամբ բժշկութիւնը ձեռք բերուած

էր: Բայց ես գիտէի որ «ազուաւի ծագերուն աղաղակին ահանջ տուող Աստուածը» իմ աղօթքիս պատասխանը տուած էր: Անոր համար «Ամէն մարմին թեղի պիտի գայ, ով աղօթքի լսող Աստուած»: Այս կերպով Սուրբ Հոգին աչքերս բացաւ ԱՂԹԹԻՆ ԳԵՐԲՆԱԿԱՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ ճանչնալու: Յետ այնու ամէն օր եւ ամէն պարագայի մէջ, նոյնիսկ ամենափոքր եւ անշան խնդիրներու համար Տէրը կը դիմեմ, ծունկի գալով Անկէ լոյս եւ առաջնորդութիւն շնորհք եւ ոյժ խնդրելով:

Երրորդ կէտը այս է, որուն համար աղօթքի շող եւ պատասխանող Աստուածը կ'ուզեմ գովել շատ ժողովուրդներու առջեւ:

Չորրորդ եւ վերջին կէտը որուն շուրջ պէտք է վկայեմ, Աստուծոյ խօսքն է որ «կենդանի է եւ զօրեղ եւ ամէն երկսայրի սուրբ կարող է, որ կը թափանցէ մինչեւ շունչը ու ոգին եւ յօդուածները ու ծուծը բաժնելու, եւ կը քննէ սրտին խորիւրդներն ու մտածումները... որուն պիտի տրուի մեր հաշիւը» Եբր. Դ. 12-13:

Ժամանակ մը վերջը, երբ հոգեւոր կեանքիս մէջ աղարանելով պաղեցայ Տէրը զիս իր խօսքին զօրութիւնովը յանդիմանեց: Դեռ Սուրբ Գիրք կարդալու սովորութենէս հրաժարած էի. եւ ահա օր մը, երբ որոշում ըրած էի ալ աղօթած ժողովներու չյաճախել, Աստուածաշունչին մէջ այս խօսքին հանդիպեցայ որ սուրբ պէս սիրաս թափանցեց, «Արթնցի՛ր, արթնցի՛ր... գորութիւն հազիր, արթնցիր առաջուան օրերուն պէս» (Եսայ. ԾԱ. 1): Զկրցի զիմաղբել մուրճի պէս զօրաւոր այս խօսքին եւ հակառակ որոշում ըրի Տէրը առջեւ, այսինքն երբեք չբացակայիլ ո՛չ քարոզածողներէն, ոչ ալ աղօթածողներէն որոնք ամենամեծ օրհնութեան պահեր են: Տէրը այսպէս զիս գաղջ եւ փախըւելու վրայ եղող իր զաւակը իր սուրբ խօսքովը յանդիմանեց, խոնարհեցուց, եւ անցեալ կեանքէս աւելի տաք, եւ ջերմեռանդ հոգի մը պարգեւեց իրեն: Այդ օրհնեալ փորձառութենէս առդին Աստուծոյ անսխալ եւ կենսատու խօսքը դանձի պէս կը պահեմ, հացի եւ ջուրի պէս կը սիրեմ. զԱյն իմ «ոտքերուս ճրագ եւ իմ շաւիղներուս լոյս» ըրած եմ: Նաեւ իմ սուրբ եւ սիրելի ծնողքիս օրհնեալ օրինակին հետեւելով Աստուծոյ ժառանգութիւնը եղող զաւակներս ալ Սուրբ Գրքի վարժութիւնովը կը կրթեմ եւ կը դաստիարակեմ: Քու պատուական խօսքիդ համար ով Աստուած, «Պե՞ծ ժողովքի մէջ քեզ պիտի գովեմ, շատ ժողովուրդի մէջ քեզ պի.

ԿԵՆԱՑ ԱՇՈՒՆԵՐԷՆ

ՅԱՂԹՈՂՆԵՐԸ

Անցեալ 1935ին Տէրը մեր շրջանէն էր երեք տարի կանչեց, որուն ք պանդխտութիւնը վերջացուցած հասան յաւիտեանական հանգիստը:

23 Մայիսին էր, երկար տարիներու տառապեցուցիչ կեանքէ մը վերջ, Տէրը մով նշեց սիրելի շաշկանուշ քոյրը, մէկ կողմէն կեանքի դժուարութեանց մէջ Սատանային յարձակումը, միւս կողմէն անողոք հիւանդութեան մը հիւծող ազդեցութիւնը կը տառապեցնէին եւ կը



սկարացնէին իր հոգին եւ մարմինը:

Հայկանուշ քոյրը օտարախառն ամուսնութեան տառապող մէկ վկան էր, օրհնեալ ըլլալ Տէրը որ զինքը սուրբերուն մահովը կանչեց:

Հիւանդանոցին մէջ անցուցած մի քանի շաբաթներու ընթացքին, Տէրը մասնաւոր այցելութիւնը ընդունեց, բաժնուած իր շրջապատի բոլոր հոգերէն ու նեղութիւններէն, պատեհութիւնը ունեցաւ աւելի վերի բաները մտածելու, երկնային ճամբորդութեան համար պատրաստուելու. թէ՛ հիւանդապահները եւ թէ՛ զինք այցելողները կը զարմանային իր համբերութեանը

վրայ, եւ որքան որ ցաւերը կը սաստկանային, այնքան Տէրը շնորհքը եւ քաղցրութիւնը կ'աւելնար իր վրայ: Վերջապէս հրեշտակային ժըպիտով մը դիմաւորեց իր սիրելի Փրկիչը:

Կ'աղօթէր իր երկու աղջիկներուն համար որոնց ձեռքէն լսնած իր անդարձ ամուսինը, լայն ճամբուն մէջ կը քալէ այսօր, սակայն յոյս ունինք որ Տէրը լսեց իր աղօթքը եւ պիտի պատասխանէ:

Իրմէն շաբաթ մը վերջը, Մօնթէլիմարէն Նազլի քոյրը փոխադրուեցաւ իր մնայուն բնակարանը:

Բերեցի, որբեւարի, 1926ին կը փոխադրուի այս կողմերը իր զաւակին հետ: Տէրը այցելութիւնը կ'ընդունի եւ զժըպող կեանքը Քրիստոսի շնորհքովը երջանկութեան կը փոխուի, ուրախ եւ ուրախացնող լեարդի տառապեցնող ցաւով մը այս քոյրն ալ գնաց միանալու իր Փրկչին, որուն սէրը ընդունած եւ վայելած էր:



Իր միակ զաւակին երջանկութեանը համար իր հանգիստն ու ունեցածը զոհեց, բայց իր փափաքն էր իր զաւակը բարձրացած եւ յաջողած տեսնել: Այս կէտին մէջ թերեւ Տէրը մէ առաջ անցաւ, փոխանակ բոլոր հոգը Անոր ձգելու, ինք բեռնաւորուեցաւ, Սաղ. Ճի. 1, 2:

Կ'աղօթէր իր զաւակին համար: Նազլի քոյրը հոս չհասաւ իր փափաքին, բայց յուսով գնաց, հիմա կ'սպասէ այն ժամուն երբ հրեշտակներ խաչատուրին փրկութեան լուրը տանին եւ ինք հրեշտակաց հետ ուրախանայ եւ ցնծայ յաւիտեանական ուրախութիւնով Ղուկ. ԺԵ. 10:

տի օրինեմ: Ամէն օր քեզ պիտի օրհնեմ, եւ քու անունդ յաւիտեանս յաւիտենից պիտի գովեմ:

Լեզուովս պիտի Աստուած գովուի,
Ու երբ մահուամբ իմ ձայնս կըտրի,
Ալ աւելի պիտի գովեմ.
Անոր փառք տալս չունի վախճան,
Ձի երբ օրերս հոս լրմնան,
Վերն յաւիտեանս պիտի գովեմ:

Տէրը զալուստին սպասող ձեր հաւատարկից քոյրը

ԹԱԳՈՒՂԻ ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ

Լոս Անճելոս

Անցեալ տարուայ վերջին ճամբորդը եղաւ Արշալոյս քոյր Գինոսեան (Ճիվէլէկեան):

Ծննդաբերութեան համար գացած էր հիւանդանոց (20 Սեպտ. 1935): Լիօնէ վերադարձին այցելեցինք զինքը. թեթեւ տաքութիւն մը ունէր զոր երթալով սաստկացաւ եւ սաստիկ տառապանք պատճառեց իրեն. մարմինն վրայ սարսափելի վէրքեր գոյացան: Որոնք ըստ բժշկներու վկայութեան սաստիկ այրուածքի մը ցաւը կը պատճառէին: Անտանելի էր իր ցաւը Յուր. 2, 10, Է. 4, 5: Սակայն ինչ օրհնեալ համբերութիւն, իր լուրթիւնը, համբերութիւնը, եւ սաստիկ

շերմի եւ ցաւի մէջ քաղցր ժպիտով մը ամէն բանի համար շնորհակալ ըլլալը իրապէս զարմաւուրցին թէ հիւանդապահները եւ թէ զինքը



այցելողները. անոր քաղցրութիւնը ամենուն յայտնի եղած էր: Լոյս մը որ հիւանդանոցի անկիւնին մէջ փայլեցաւ Յ տառապանքով լի ամիսներ Մատ. Ե. 16:

Ըստ իր վկայութեան, զոր գրած է իր սերտողութեան տետրակին մէջ, Գաղիբի որբունհրներէն, 19 Ապրիլ 1933ին քրոջ մը միջոցով ապաշխարութեամբ Յիսուս Քրիստոսը իր անձնակաւ Փրկիչը կ'ընդունի եւ անկէ ի վեր կ'ապրի իր փառքին համար. ահա ինչ որ իր ձեռքովը գրած է:

«Ուրեմն ինք որ իր վեհափառութեամբ ամօթ չսեպեց ինծի պէս տգէտ եւ անպէտք իրեն զաւակ կոչել, ես ալ իր օգնութեամբ եւ զօրութեամբ իրեն վստահելով կը խոստանամ ամէն պարագայի տակ եւ ամէն մարդու առջեւ դաւանիլ զԱյն իբրեւ իմ անձնակաւ, հօր Փրկիչս եւ Ազատիչս եւ դարձեալ Անոր նուիրուած ապրիլ իրեն համար, հիմա եւ միշտ յաւիտեան»:

Այսպէս ալ եղաւ:

1926ին Գաղիբէն հոս կը փոխադրուի իր մի քանի ընկերուհիներուն հետ, ուր հանդիպեցանք իրարու, որոնք իրենց աղօթքներով զօրութեան եւ քաջալերութեան աղբիւր մը եղան մեզի: Տէրը աղօթքներու պատասխան հրաշքներ գործեց մեր մէջ եւ իր զարմանալի այցելութիւնները վայելեցինք: Ամէն անգամ որ զրգաւորութիւն մը պատահէր, Արշալոյս եւ իր աղօթքի ընկերները հաւաքուած՝ հաւատքով կը պատերազմէին եւ Տէրը կը գործէր: Այդ օրհնեալ օրերը յիշել ուրախութիւն կուտայ մեզի եւ կ'աղօթենք որ Տէրը բացողներուն տեղ նորեք հանէ ու փառաւորէ իր սուրբ անունը: Իր անբաժան ընկերներէն մէկն ալ էր Շուշան քոյրը որ իրմէ տարի մը առաջ փոխադրուեցաւ երկինք:

Շուշանին մահէն վերջն էր օր մը երբ իրենց այցելեցի, ըսաւ թէ այս տարի կարգը իրենն է երթալու. ըսի թէ ինք գործ ունի եւ Տէրը զինք պիտի պահէ իր գաւակներուն համար. ինք կրկնեց.

— Պիտի երթամ, սակայն չեմ գիտեր ինչպէս պիտի անցնիմ մահուան դատէն, թէ եւ յոյսս եւ հաւատքս չաւտատ է Տէրոջը վրայ, սակայն

մահուան խորհուրդը սարսուռ կուտայ ինծի: Պատասխանեցի թէ Տէրը պէտք եղած շնորհքի զօրութիւնը պիտի տայ այն ատեն:

Իր հիւանդութեան ամենածանր մէկ շրջանին էր, առաւօտ մը զինք այցելեցի, հագիւ լսելի ձայնով մը ըսաւ,

— Եղբայր, այս գիշեր հիւանդանոցի առանձնութեան մէջ, մահը շատ մօտ եկաւ ինծի. աղօթեցի, զարմանալի զօրութեամբ մը լեցուեցայ. Տէրը չը տարաւ, սակայն յօժարեցուց ու պատրաստեց զիս: Ալ մահէն չեմ վախար, կ'ուզեմ երթալ: Սիրտը կ'այրէր: «Աստուծոյ խօսքէն ջուրի մասին կարգա ինծի» ըսաւ, ու ես կարդացի Յովհ. Դ. 13, 14, 2. 35. Յայտ. Է. 16, 17, ԻԱ. 6, Եսայ. Խթ. 10:

Իր ամուսինն եւ իր գաւակներուն վրայ սկըսաւ մտածել: Ըսի թէ Տէրը պիտի հոգայ եւ պահէ զանոնք: Եւ իրաւ ալ Տէրը այդ օրերուն իր աղօթքին պատասխան հեռաւոր տեղէ հոգեւոր քոյր մը առաջնորդեց որ սիրալոյս իր գաւակներուն հոգը ստանձնեց եւ մինչեւ հիմա ալ շատ սիրով կ'ընէ այդ գործը:

Առողջ եւ զործունեայ, իր այս յանկարծակի ծանր հիւանդութիւնը զինք անձնաքննութեան մղեց: Ան իր մէջ եղած փոքր սխալները եւ տրկարութիւնները խոստովանելով, մաքուր խղճմըտանքով յանձնուեցաւ իր Տէրոջը կամքին: Իր հիւանդութեան շատ տագնապալից շրջանին իսկ կը սիրէր Փրկչին սիրոյն վրայ խօսիլ եւ կ'աղօթէր հոգիներու համար: Օր մը երկու անդարձ տիկիներու համար աղօթած էր եւ լուր զրկած էր ինծի որպէսզի երթամ գիրենք այցելեմ եւ իրենց փրկութեանը մասին խօսիմ:

Արշալոյս աղօթող քոյր մը, լուռ եւ հանդարտ տանտիկին մը եւ քաղցր ու հեղ կեանքով իր զրացիներուն առջեւ փայլող Տէրոջը մէկ աղախինն էր: Տկարներու եւ կարօտ հոգիներու հոգածու մօր մը սէրը կը ցուցնէր եւ եկեղեցիին հոգը ճշմարտապէս իր սրտին վրայ կրող անկեղծ եւ հաւատարիմ հաւատացեալ մը եղած էր:

Ամուսնացած 2 Փետր. 1929ին, իր ամուսինն ճշմարիտ նեցուկ մը եւ զայն կրող հաւատարիմ կեանքի ընկեր մը եղած էր եւ պսակ իր առաքինութիւններով իր ամուսնոյն՝ որուն հնազանդ էր եւ կը սիրէր: Իր վերջին սիրոյ պատուէրը եղաւ հաւատարիմ մնալ Տէրոջը եւ եկեղեցիին: Իր գուրգուրանքին առարկայ 5 գաւակները այսօր կը մեծնան Տէրոջը օգնութեամբ. ինք շատ աղօթեց անոնց համար. այս տողերը կարդացող հաւատացեալը թող աղօթէ անոնց հա-

մար որ այս քուրը եթէ հոս չվայելեց անոնց փրկութեանը ուրախութիւնը, երկինքը յաւիտենական ուրախութիւնը ունենայ անոնց համար:

Ծնած էր 23 Օգոստ. 1914ին եւ Տէրոջմով նընջեց 1 Դեկտ. 1935ին գիշերը. Բշ. առաւօտ լսեցինք իր մահը. Տէրոջը գաւազները շատ փափաքեցան որ իր անշնչացած մարմինը փոխադրուի ժողովատեղին, քանի որ հիւանդանոցը բաւական հեռու է եւ շատեր կը փափաքէին անգամ մըն ալ տեսնել եւ հաւաքուիլ իր անշունչ մարմին շուրջ. այնպէս ալ կարգադրուեցաւ եւ Արշալոյս քոյրը հիւրասիրեցինք իր շատ սիրած ժողովատեղիին մէջ դիշերելու: Երեկոյին բոլոր հաւատացեալները հաւաքուեցան եւ ուրիշ շատեր ալ եկած էին: Արշալոյս քոյր Նիհարցած եւ հիւժած մարմինը կը հանգչէր դագաղին մէջ ծաղիկներով շրջապատուած. դէմքին վրայ քաղցր ժպիտ մը կար, կարծես թէ քնացած ըլլար. եղան երգեր, վկայութիւններ եւ աղօթքներ:

Հետեւեալ օրը երկինք ամպերով ծածկուած էր. տխուր եւ մեղամաղձոտ աշնանային անձրեւ մը անընդհատ կ'իջնէր. սակայն անախընթաց բազմութիւն մը թէ ֆրանսացի եւ թէ հայ, հաւաքուեցան ժողովատեղին, ուր կատարուեցաւ թաղման պաշտամունքը եւ Աստուծոյ խօսքին օրհնեալ վկայութիւնը, ուրկէ թափօրը առաջնորդուեցաւ գերեզմանատուն, ուր կարճ, սակայն յուզիչ արարողութենէ մը վերջ Արշալոյս քոյր մարմինը յանձնեցինք հողին, ուրկէ առնուած էր ժող. ժԲ. 7: Հոն, նոճիներու շուքին տակ արդէն կը հանգչին իր սիրելի հոգեւոր քորերը եւ կը հաւատանք թէ հիմա Փրկչին մօտ կը հրճուին յաւիտենական ուրախութիւնով, ու յուսով կը սպասենք տեսնել զինք բոլոր սիրելեաց հետ մեր Փրկչին փառաւոր զաւստեան ատենը եւ յաւիտեան վայելել զիրար Ա. թեո. Դ. 15-17: Եւ ասով մխիթարուած փառք կուտանք Իր բոլոր կարգադրութիւններուն համար:

Օրհնեալ է սրբոց յիշատակը:

Վեր. Ա. Օ. ՓԱՓԱՋԵԱՅ

Փօնտ Օպէնաս



ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԴԱՍԵՐՈՒ

ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

ԱՊՐԻԼ 5. — (Ծաղկազարդ)

ՅԻՍՈՒՍ ԲՈՂՈՐ ՄԱՐԴԻԿԸ ԿԸ ՀՐԱԽԻՐԷ

Դաս Ղուկ. ԺԴ. 15-24:

Կարգալ Եսայ. ԾԵ. 1-7:

Հմր. 24, Այս հրաւիրուածները Յայտ. ԺԹ. 9ի «կանչուածները» չեն, հապա Մատթ. Ը. 12ի «թագաւորութեան սրբիները», որոնք դուրսի խաւարը պիտի հանուին: Տանուտէրը մեծ է, ընթրիքը մեծ (եւ պարարտ Եսայ. ԾԵ. 2) եւ տունը մեծ (բաղդ. Յովհ. ԺԴ 2 եւ Յայտ. ԻԱ. 16): Ըստ այնմ տանուտէրը շատ մարդիկ հրաւիրեց, ու երբ անոնց ամէնը մէկէն սկսան ետ քաշուիլ՝ անոնցմէ մէկն ալ ընթրիքին համը առնելու արժանի չեղաւ՝ սակայն նորէն ալ տունը լեցուեցաւ (Տ. 23): Զուտ ձրի շրնորհքն է այս շնորհաց Աստուծոյ կողմէ մեզի:

«Քրիստոսի խորհուրդն է այս, Աստուծոյ բազմատեսակ իմաստութեան յայտնութիւնը, որպէսզի հեթանոսները Քրիստոսով ժառանգակից ու մարմնակից եւ Անոր խոստմունքներուն հաղորդ ըլլան Քրիստոսով» (Տես Եփես. Գ. 4-6, 10: Հոով. ԺԱ. 25):

Ղուկ. ԺԴ. 21-23, «Հրապարակները ու փողոցները... ճամբաները ու ցանգերը (բաղդ. Առուկ. Ը. 1-6, Թ. 1-6):

Եւ հիմա նոյն հրաւէրը մեզի ուղղուած է, «Եկէք, վասնզի արդէն ամէն բան պատրաստ է» Տ. 17:

Շատ խեղճուկրակ փորձ մը պիտի ըլլար եթէ ջանայինք պատրաստուած ամէն բանը համբել: Բայց կրնանք յիշել միայն այն մէկը որ իր մէջ ամէն բանը կը պարունակէ, Յիսուս Քրիստոս:

Անոր խաչը արդէն տնկուած է Գողգոթայի վրայ: Անոր զլուխը արդէն պսակուած է փշեղէն պսակով: Անոր կողը արդէն խոցուած է գեղարդով: Անոր զարշապարը արդէն խայթուած է օձէն:

Բայց նա օձին զլուխը ջախջախած, մահուան յաղթած ու յաւիտենական փրկութիւնը կատարած է: Դէպի Յարութեան կիրակին գացող այս շաբաթը լեցուն է ամէն բանի պատրաստութեան յիշատակներով: Ուստի «Եկէք, վասնզի արդէն ամէն բան պատրաստ է»:



ԱՊՐԻԼ 12.— (Դաս Զատկի)

ՅԻՍՈՒՍ ՄԱՀՈՒԱՆ ՎՐԱՅ ՅԱՂԹԱՆԱԿ ԿԸ ՏԱՆԻ

Դաս Ղուկ. ԻԴ. 1-12: Կարդալ Յայտ. Ե. 9-15:

Զատկի այս դասին մէջ ուշադրութեան առնենք նախ կանանց դիրքը (հ. 1-2): Յիսուսը սիրող կիներէ էին ասոնք եւ Անոր ծառայելու միշտ յօժար, նոյնիսկ մահուանէ յետոյ ծառայելու յօժար: Բայց հիմա եկած եւ գերեզմանը բաց գտած են եւ տարակուսանքի եւ ապշութեան մէջ ինկած են: Յիսուսի յարութեան զաղափարը իրենց մտքին պատկած չէր: Մինչդեռ Բեթանիացի Մարիամ ճանչցած էր Յիսուսը աւելի մօտէն եւ հարկ եղած սիրոյ ծառայութիւնը կատարէն ըրած էր և մեռնելէն վերջը Անոր մարմինը խոնկերով զմոսելու պէտք չէր զգար, քանզի գիտէր թէ Յիսուսի մարմինը գերեզմանին մէջ ապակաշուկային պիտի չտեսնէ. ես եմ յարութիւնը ու կեանքը խօսքին արդէն հաստատցած էր:

Յիսուսի յարութիւնը յաղթութիւն էր: Քննենք Կող. Բ. 12-15 եւ հոն տեսնենք Քրիստոսի յաղթութեան տարածականութիւնը իշխանութիւններու և պետութիւններու վրայ: Մեղքին, դժոխքին եւ մահուան վրայ ալ յաղթանակ տարած է (Ա. Կոր. ԺԵ. 20-26): Անիկա ամենուն Տէրն է եւ ամէն իշխանութիւն Անոր ձեռքն է երկիրքի մէջ ու երկրի վրայ, Մատթ. ԻԸ. 18, Ա. Կոր. ԺԵ 26, Եփես. Ա. 23: Անիկա է ամէն ինչի մէջ նախապատիւը Կող. Ա. 18:

Անոր յարութեան զօրութիւնը: ա. Մեր հաւատքի հիմը դրուեցաւ Ա. Պետ. Ա. 21: Բ. Կենդանի յոյսի մը համար ծնանք Ա. Պետ. Ա. 5, 4: Գ. Քրիստոսի ձեռքով արդարութեամբ պիտի դառնուի աշխարհ Գործ. ԺԷ. 31 եւ հաւատացեալները Անով արդարացած են Հոով. Դ. 25, քանզի Անիկա ոչ միայն մեր տեղը խաչը բարձրացաւ, այլ նաեւ իբր մեր ներկայացուցիչը յարութիւն առաւ եւ մեզի համար որպէս ներկայացուցիչ կը նստի Աստուծոյ աջ կողմը Եփես. Բ. 5, 6: Գ. Յիսուսի ձեռքով մենք եւս աշխարհէ պիտի ազատինք Հոով. Ե. 9, 10: Ե. Անոր մէջ ըլլալով մենք պտուղ ունինք Հո. Է. 4: Գ. Յարուցեալ Քրիստոս մեր յաւիտեանական Քահանայապետն Աստուծոյ աջ կողմը Հոով. Ը. 34-Եբր. Է. 25: Է. Աստուծոյ զօրութեան ապացոյցը տրուեցաւ մեզի Յիսուսի յարութիւնով Եփես. Ա. 18-20: Բ. Յիսուսի յարութիւնը մեր յարութեան երաշխատրութիւնն է Ա. Թեա. Դ. 14: Բ. Կոր. Դ. 14: Վերջապան Ա. Կոր. ԺԵ. 57, 58: Ամէն:

ԱՊՐԻԼ 19.—

ԱՍՏՈՒԱԾ ՆԵՐՈՂ ՀԱՅՐԸ

Դաս Ղուկ. ԺԵ. 11-24:

Կարդալ Սաղ. ՃԳ. 9-14:

Այս պատմութեան առակին մէջ զԱստուծոյ ներկայացնող հօրը բաժինը նկարագրուած է ըսկիղբէն մինչեւ վախճանը իբր ցաւ քաշող հօր մը վիճակը: Միայն մէկ բացառութիւն կայ՝ այն ալ պատիկ որդւոյն վերադարձի պահուն հօրը անեցած ուրախութիւնն է:

Հօրը ցաւին պատճառները իր որդիներն են. մեծ որդին գրեթէ ոչ պակաս քան պատիկ որդին: Արժէքատուր ամէն ինչ հօրը կը պատկանի. ստացուածքը, սէրը, համբերութիւնը, գութը, գրկիլը, համբուրելը, ծառաներուն տուած հրամանը, առաջին պատմութեան, մատանին, կօշիկները, պարարտ գուարակը, ուրախութիւնը, աղաչելը (հ. 28). համոզելը (հ. 31) ամէնը, ամէնը հօրը կը պատկանին: Զաւակներուն բաժինն է միայն երեսի աւօթ ըլլալիք բաներ: Զղջում, դարձ եւ խոտովանութիւն, բայց գնահատելի են ասոնք հօրմէն որ արժէք կուտայ անոնց եւ զրկաբաց սիրոյ բազուկներով կ'ընդունի Որդին:

Այս պատմութեան մէջ ամէն ինչ ծայրայեղ բառերով արտայայտուած է ցոյց տալու համար մեղքին ոյժը: Հմր. 12 «Բաժինը (ամբողջութեամբ) տուր ինծի»: 13 «Շատ օրեր չանցած (կարծես հօրմէն ձանձրացած էր), բոլոր բաները ժողովեց ինչ ուս երկիր մը գնաց»: 13, 14 «Անառակութեամբ փառացուց... ամէնը հատցուց, սպասիկ սով մը, խոզեր արածելու համար»: 14-17 «Զբաւոր... խոզերուն կերած եղջիրէն... մէկը չէր տար անոր... սովամահ կը կորսուիմ»:

Այսպիսի անյոյս վիճակի մը մէջ նկատենք նաեւ անառակին լման տրվումութիւնը եւ լման ապաշխարութիւնը: «Քանի՜ բանուորներ իմ հօրս տունը... ու ես հոս» (հ. 17): «Մեղանչեցի երկիրքին դէմ... արժանի չեմ... վարձկան ըրէ» 18-20:

Բայց երկնային այս տեսիլքին ամենահրաշալի տեսարանը 20րդ համարն է:

Նշանաւոր Աւետարանիչ Վեր. Սփրքըն այս նիւթին վրայ տուած քարոզներէն միոյն անունը դրած է (հօրը կողմէն) «Շոալուած սէր շոալ (անառակ) որդւոյն հանդէպ»:

Մինչդեռ ինք շատ հեռու էր, հայրը տեսաւ զանիկա ու գութը շարժեցաւ եւ վազելով (հայրը եւ ոչ թէ որդին) անոր պարանոցին վրայ ինկաւ ու համբուրեց զանիկա...: Արժանի չեմ քու որդիդ ըսուելու Բայց հայրը ըսաւ... (հ. 21, 22):

ԱՊՐԻԼ 26.—

ՅԻՍՈՒՍ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԱՂԲԱՏՈՒԹԻՒՆ
ՆԸ ԿԸ ԴԻՏԷ

Դաս Ղուկ. Ժ. 19-31:

Կարգալ Ա. Յովհ. Գ. 15-18:

Յիսուս այս պատմութիւնը-առակը խօսեցաւ երբ արծաթաւէր փարիսեցիներ զինքը կը քամահրէին իր այն խօսքին վրայ թէ «Անիրաւ մամոնայէն ձեզի բարեկամներ ըրէք...» (Ղուկ. Ժ. 9, 13, 14): Ուստի հարուստին յանցանքը իր հարուստ ըլլալը չէ, հապա իր հարստութեան ապաւինիլը (Մարկ. Ժ. 24, Ղուկ. Ժ. 15-21): Սուրբ Գրքը կը յիշէ ուրիշ հարուստներ՝ որոնց «ստացուածքներուն աւելնալէն կախուած չէր իրենց կեանքը» (Ղուկ. Ժ. 15) ինչպէս Յոռ, Երեմիա, Դաւիթ, Յովսէփ Արիմաթացի, ուրիշ Ղազարոս մը (Յովհ. Ժ. 2), Պօղոս, Թէոփիլոս, Փիլիմոն և ուրիշներ: Ֆրանսացիները սովորութիւն ունին մեր այսօրուան դասին հարուստը «գէշ հարուստը» մակդիրով յորջորջել և իրաւ ալ պատմութեան ընթացքին կը հասկցուի որ «բոլորովին անոր մտքին մէջ Աստուած չկայ» Սաղ. Ժ. 4:

Անիկա ունէր ծիրանի ու բենեզ հագուստ, բայց մերկ էր «սուրբերուն արդարութիւնը եղող մաքուր ու լուսափայլ բենեզէն» Յայտ. Ժ. 8: Անիկա ունէր առատ ուտելիք ու խմելիք, բայց Որդւոյ մարդոյ տուած ճշմարիտ ուտելիքն ու ըմպելիքը ճաշակած չէր (Յովհ. 2. 54): Անիկա ունէր ուրախութիւն, բայց այնպէս «ինչպէս փռուշերուն ձայնը կաթնալի տակ» (Ժող. Է. 6): «Վա՛յ ձեզի որ կուշտ էք, վասնզի պիտի անօթենաք... որ հիմա կը ծիծաղիք, վասնզի սուգ պիտի ընէք ու լաք» (Ղուկ. 2. 25, Սաղմ. Խթ. 16-20):

Աղքատ Ղազարոսի վիճակը Աբրահամ մէկ բառով կ'արտայայտէ, «չարիքներ» (Կ. 25): Մինչդեռ հարուստին չարիքները կ'սկսին անոր մահուամբ. հրեշտակներ կ'սկսին սպասաւորել անոր, Աբրահամի գոգը հանգիստ կը գտնէ և կը մխիթարուի: «Երանի՛ ձեզի աղքատներու...»:

Այս դասը ամենէն պարզ և ամենէն ահարկու կերպով կը նկարագրէ նաեւ զԺոխքի յաւիտենական կրակով տանջանքը.—

Դժոխքին մէջ երբ տանջանքի մէջ էր...: Իր մատին ծայրը ջուրը թաթիսէ ու զովացնէ իմ լեզուս... այս բոցին մէջ կը տանջուիմ...: Դուն կը տանջուիս... մեր ու ձեր մէջտեղ մեծ անդունդ մը կայ հաստատուած:

Տանջանքին ահարկութիւնը կարելի է հասկնալ նաեւ տանջուող հարուստին՝ իր 5 եղբայրները ազգաբարեւու համար ըրած խնդրանքէն:



ՊԱՏԱՆԵԱՅ

ԿԻՆԱԿ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆ

1915ի Զատիկուան առաւօտը դեռ նոր կը լուսաշողուէր: Ամերիկայի Պոսթըն քաղաքի արուարձաններէն մէկուն տուները հեռուէն հազիւ իրարմէ կը զանազանուէին, կարծես թէ անոնք ալ իրենց նիւհող բնակիչներուն հետ միասին կ'սպասէին արեգակին ղուարթ ճառագայթներուն, որոնց հետ կարծես աւելի լուսաւոր և կենսալից աւետիսի մը ճառագայթները հիւսուած պիտի ողջունէին մարդկութիւնը «Բրիտոս յարեաւ ի մեռելոց»ով...:

Պատուհան մը կը բացուէր յանկարծ՝ կարծես խաւարի և լուսոյ խուլ պայքարի մէջ լուսոյ օգնութեան հասնելուն նպատակաւ: Տասնութէն տասներէնը տարու պատանի մըն էր նա որուն դէմքը թէեւ կայտառ ու առոյգ, բայց կարծես անտանելի թախիծով մը քողարկուած էր:

Ինչո՞ւ այսքան կանուխ արթնցար, ինչո՞ւ այսօրը երեկուան հետ շփոթեցիր. կերակի է հոյնիսկ Զատիկ, քրիստոնեաներու ամենէն պատուական և զուարթ օրը: Այսօր գործարանները փակ են, ի զուր պիտի սպասես քու գործարանիդ շրջին: Դարձիր պատանի, դարձիր անկողինդ շրջին: Դարձիր անկողինդ հայ պատանի և հոն հանգիստ շոյլէ քու յոգնած զգացումներու...:

Մ. պատուհանին ղուրսի փեղկերը լաւ մը բանալէն յետոյ, ապակիներ կիսախուփ թողուցած, վերադարձաւ դէպի իր սեղանը և հոն զըլուխը ձեռքերուն մէջ առած, աչքերը սեւեռուն սկսաւ խոկալ: Չէր իօսեր ան, բայց յայտնի էր թէ ներքնապէս խիստ զբաղած էր: Անցեալն էր որ իր մտքին առջեւէն կենդանիօրէն զեղանդ-կարուած կ'անցնէր: Մ. իր անհատական պատկերահանդէսին առջեւ կը գտնուէր և իր անցեալը կը դիտէր: Մանկական անոյշ օրերը իրարու ետեւ իրենց քաղցր յիշատակովը կ'անցնէին: Ա՛հ, մայրիկը և ազգականները, մեծ հայրը որ քա՛ն կը սիրէին զինքը, շա՛տ սիրած էին զայն:

կը մեծնար, եօթը տարեկան կ'ըլլար, հոն ընկերներուն հետ մեկտեղ դպրոց կ'երթար: Միտքը կուգար առաջին դպրոցական օրը: Երջանի՛կ տարիներ, ուրախութեան եւ ճոռողումի, սորվելու, ամբարելու տարիներ, բարեսիրտ եւ սորվեցնելու տենչով լի ուսուցիչներու ձեռքին տակ, բայց նաեւ այնպիսի ուսուսիչներու ալ, որոնց ներկայութիւնը յիշուի աշակերտաց մեծագոյնին անբաղձալի էր եւ անոնց սորվելու ակորժակն ու փոխադարձ մտերմութեան քաղցրաշունչ մթնոլորտը կը թունաւորէր: Անոնց դասերը տաղտուկ մըն էին եւ անոնց տուած նօթերը անիրաւութեան նօթեր: Մ. միտքը բերաւ թէ այդ ուսուցիչներու հանդէպ ներքին պոթթումի մը առթիւ ինչպէ՛ս տեղի տուած էր եւ չար ընկերներու հետ միարանած բարի տնօրէնին զրասեղանը կոտրած եւ անոր զգրոցէն հանած էր աշակերտաց նօթերուն տոմարը, որուն մէջ կը խորհէր աշտուղթիւն եղած էր իրեն եւ ուրիշներու եւ ուստի այդ անիրաւութեան զրքին վախճան կուտար զայն պատուելով ու բոցակէզ մոխրի վերածելով: Կը խորհէր թէ այդ արդարութիւնը կատարելէ յետոյ ինքն այլեւս տիպար աշակերտ մը պիտի ըլլար...: Բայց Մ. Տեսաւ որ անկէ վերջն ալ շտկուած չէր: Ու չէր գիտեր թէ ի՞նչ է պատճառը այս անբաղձալի կեանքին, եւ թէ ինչպէ՛ս կրնար ազատիլ անկէ: Կիրակնօրեայ դպրոց կ'երթար, կը սորվէր, բայց այդ ուսուցիչներուն հանդէպ եղած ատելութիւնը կը խորշակահարէր հոն տեղ խնամով մշակուած մատաղատունկերը: Այս թշուառ վիճակին միակ պատասխանատուն Դ. ուսուցիչը կը զըտնէր եւ միշտ ալ իր սիրտը կը խստացնէր ապստամբ պոթթումով մը, հակառակ ամենուն: Անապաշխար սիրտ մը միշտ այդպէս կ'ընէ, իր թշուառ վիճակին պատասխանատուները միշտ ուրիշներն են...

Հայրը գինք այլեւայլ պատճառներով Ամերիկա զրկեց հակառակ փափկասիրտ մօր թախանձանքներուն: Ու հիմա եօթը ամիսներէ ի վեր հոս կը գտնուէր: Եօթը ամիս, բայց կը կարծէր թէ եօթը տարիէն աւելի կ'ընէ տունէն բաժնուելը: Հոս մայրական յանդիմանութիւն եւ սէր, հայրական խաւատ կը պակսէին իրեն: Մինա՛կ էր նոր աշխարհի թոհ ու բոհին մէջ: Մինակ մէկ խօսք մը, վերջին խօսքը հայրիկին՝ իր մտքին մէջ գամուած մնացած էր եւ զինքը եօթը ամիսներէ ի վեր անհանգիստ կ'ընէր, «Որդիս, կ'աղօթեմ եւ կը յուսամ թէ Ամերիկայի մէջ տար-

բեր պիտի ըլլաս եւ Աստուածահաճոյ կեանք մը պիտի վարես:

Ամերիկա գալուն պէս ալ փնտռած գտած էր Հայ Աւետ. եկեղեցի մը եւ հոն կը յաճախէր: Ամերիկեան Y. M. C. A. կ'երթար, բայց հակառակ իր բոլոր բաղձանքներուն, հօրը ըսածին պէս չէր կրնար ապրիլ: Բան մը կը պակսէր, ու այդ պակասին ի՞նչ ըլլալը անմահօթ էր իրեն:

Սովորութիւն ըրած էր ծունկի գալով աղօթելու, ուստի մեքենականօրէն վար կը սահէր աթոռէն եւ կը ծնրադրէր: Պատկերաշարժը ա՛լ կեցած էր վերջին պատկերին վրայ: Այս պատկերը իր ներկայ վիճակն էր, պառակտուած ու թշուառ աւերակոյտ մը: Բարի որոշումներու եւ ձեռնարկներու անանկութեան հաշուեկշիռ մը: Հակառակ որ ամէն օր նոր որոշում տուած էր, սակայն կը գտնէր որ աւելի շուտ ինկած էր քան երեկ, կը գտնէր որ բան մը արգելք էր այդ բարձր կեանքին, կ'զգար թէ բան մը փոխուելու էր...

Յուսակտուր կարճ ճիչ մը կը վրդովէր լուսաւորուած լուծիւնը կցկտուր բառերով, «Տէր, ողորմէ ինծի մեղաւորիս» որոնց կը յաջորդէր խուլ հեծկառութիւն մը...

Բաւական ժամանակ անցած էր: Չատկի առաւօտը իր լուսաշող ճառագայթներով ողողած էր բոլոր տուններն ու փողոցները, մարդիկ արթնցած էին բայց դեռ շատ ձայն չկար դուրսերէ, ու մինչ եկեղեցւոյ զանգակները քաղցրահնչիւն ղողանջիւններով բարեպաշտ ժողովուրդը ժողովի կը հրաւիրէին, հոն այդ սենեակին մէջ աթոռին առջեւ դեռ ծնրադրող Մ. իր յարուցեալ Տէրոջը հետ հանդիպում մը կ'ունենար, որուն ի հետեւանս Աստուածային խաղաղութիւնը կը հոսէր իր սիրտը եւ զանգակներուն ղողանջիւնին հետ կը կնքուէր նաեւ Աստուծոյ եւ իր միջեւ խաղաղութեան դաշինքը:

Մ. ոտքի ելաւ, վկայելու պէտքը կ'զգար, գրիչը ձեռք առաւ եւ զրեց հեռուն գտնուող իր եղբոր.—

Սիրելի եղբայրս,

...Յարութեան տօնին զանգակները իմ եւ Աստուծոյ միջեւ կնքուած խաղաղութեան դաշինքի զանգակները եղան: Անոր բոլոր խոստումները ինծի համար են, ես ալ իրեն հետ յարութիւն առի մեղքի կեանքէն, փառք Իրեն: Այսօր ինձ համար կրկնակ յարութեան տօն է...: Մ.

XXX

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՅԻ ԱՇԱԿԵՐՏԱՅ ԵՐԳԸ

ՅԻՍՈՒՍ “ԻՄ ՎԷՄՍ,,

Թարգ. Անգլ. Յ. Ն. Ղ.

2-րդը: Վերեւ աշխարհ, ուր գեղարեւ շինեւ տուն: Բայց ոչ թէ աւագ
որ տեղէն տայ օրն ի բուն: Եւ չը սոսկանք հոգիս փոթորի
կէ ուժգին: Ընդ միշտ ապագայս, որք չեմք մտնել ի մէջ:

վէմն է աշխարհ, ուր պէտք է շինել տուն,
Բայց ոչ թէ աւագ, որ տեղի տայ օրն ի բուն
Այլ չը սոսկանք հոգիս, փոթորկէ ուժգին,
Ընդ միշտ ապագայս կենք երբ շինենք տունն ի վէմն:

Երգենք թարմ ձայնով եւ ուրախ գէմ-
քով մը: Բոլոր աշակերտները ոտքի
կենան եւ իրարմէ մի քիչ հեռու. երգի
ատեն շարժում ալ ընելու համար, քան-
զի այս երգը ձեռքի շարժումով ալ կա-
րելի է երգել:

Շարժումներ

1. Վայր բառին երբ կը հասնինք,
ձախ ոտքը զարնել աջ ոտքին բոլորովին
կից, զինուորական դիրք մը առնե-
լու պէս եւ երկու ձեռքերը զիստերուն

վրայ: Այս շարժու-
մը կը մնայ մինչեւ
«տուն»:

2. «Բայց ոչ» բա-
ռին հետ աջ ձեռ-
քին մատը բարձ-
րացնել մինչեւ կուրծքէն
վեր եւ շարժել աջ ու ձախ
«ոչ»ի շարժումը ցոյց տա-
լու մինչեւ «աւագ»:

3. «Որ տեղի տայ» եր-
կու ձեռքերը կուրծքին
մօտ իրարմէ քանի մը
սանթիմէթր հեռանում-
թեամբ բարձրացնել եւ
մատները աշխատեալ մը շար-
ժել, որպէս թէ աւագը պի-

տի թափէր մատներուն մէ-
ջէն, միեւնոյն ատեն թե-
ւերը դէպի ձախ տանիլ
հանդարտ մը պատկերա-
ցնելով աւագին տեղի տալը:

4. «Փոթորկէ ուժգին».
այս երկու բառերուն առջև
երկու ձեռքերուն մատները
կլորցնելով փողի ձեւ մը
կազմելով բերանին տա-
նինք եւ ներկայացնենք
փոթորիկին ուժգին ձայնը
փողին մէջէն:

5. «Ապագայս» երկու ձեռ-
քերը իրարու վրայ բար-
ձի մը պէս մեր աջ ուսին
կողմը տանինք եւ մեր զը-
լուսը անոնց վրայ դնենք,
որպէս թէ պիտի քնանա-
լինք:

6. «Վէմն», «մին» վան-
կին զալէն առաջ արդէն
ձեռքերը իրարմէ քակուած
պատրաստ են նոյն դիրքը
առնել ինչպէս առաջին
շարժման ատենը: Արդէն
ոտքերը հաստատ կայնած
են բոլոր երգին ատենը.
միայն կը մնայ այս ան-
գամ ձեռքերը կրկին զիս-
տերուն տանիլ եւ անոնց
վրայ ուժգին մը հանգչեց-
նել:

Ահա գեղեցիկ երգ մը
կիր. զպրոցի աշակերտնե-
րը ուրախացնելու համար:
Տէրը ասիկա ալ իր
փառքին համար գործածէ:

ՀԱՅ ԱՌԵՏ. ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍՍՅԻ ՄԷՋ

(Շարաքամիչի աղօթածողովներու մասին հարցնել տեղոյն վրայ):

ՄԱՐՍԷՅԷ—Հովիւ՝ (վեր.) Յ. Ն. Ղազարոսեան
7 Rue Papère.

Տ. 30 կիր. դաս փոփոխու 2 r. Philippe de Giraid
18 30ին աղօթածողով, » »

Կիր. ժամը 13 45ին քարոզածողով, » »

Մանկանց համար

Կիր. դասեր ժամը 9. 30ին քաղաքին մէջ

Սէնժուլիէն եկեղեցւոյ աղօթատեղիին մէջ

Լէզ Օլիվ, Սէն ժէրոմ, Ս. Միքը, Ալ, Պուլ.

վար Օտո մասնաւոր քնակարաններու մէջ:

Շարաքամիչի ժողովներ

Բ.շր. ժամը 2ին ՍէնՅ Անժուան,

Դ.շր. ժամը 2ին Սէն ժիւլիէն եւ Լէզ Օլիվ

Դ.շր. 19 30ին քաղաքը 11, Rue de l'Eclipse

Ե.շր. ժամը 20ին Սէն ժէրոմ

Ուր. ժամը 20ին Camp Victor Hugo

Սէն ԼՈՒ.—Քարոզիչ՝ Պատ. Վահան Սահակեան
Chapelle Evang. Arm. Bd. Escalon, St. Loup

Կիր. ժամը 8ին մանկանց կիր. դաս:

9. 30ին Ս. գրական ուսումնա

16 ին քարոզածողով:

ՍէնՅ ՄԱՐԿՐԻԻԹ.—

Կիր. ժամը 16ին աղօթածողով:

ԼԱ ՍԻՕՏԱ.—Քարոզիչ՝ Պատ. Ս. Պազգալեան
24 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով

Ֆրանս. եկեղեցիին մէջ

15 ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը

.....

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիւ՝ վեր. Ա. Փափազեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս

10. 15 քարոզածողով

18. 30 աղօթածողով

Սէն ՓԻԷԹ.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:

16. 30 ին քարոզածողով եւ

աղօթածողով

ՄՕՆՏԷԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց

14ին քարոզ եւ աղօթածողով:

.....

ՎԱԼԱՆՍ.—Հովիւ՝ քրոջ. Գ. Գ. Խայկեան
55 Ave. Jean Jaurès Bourg les Valence
(Drôme)

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս
եկեղեցի ին մէջ

ՌՈՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

ՀԻՕՆ—Հովիւ՝ վեր. Ժ. Պարուսեան,
18, Rue du Dr. Rebatel
Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,
5 Cours Lafayette, 8 Passage Coste.
11ին աղօթածողով նոյն տեղը:
15 ին երիտասարդութիւններու
ժողով (15 օրը անգամ մը):
18 Rue du Dr. Rebatel.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,

15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով

Rue Lafayette.

ՓՕՆ ՏԸ ՇԵՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով

(15 օրը անգամ մը):

ՍԷՆԹ ԷՐԻԷՆ—Քարոզիչ Պատ. Խ. Աբրահամեան
60 Rue Richelandière

Կիր. ժամը 10. 30ին քարոզածողով

51 Rue de la République

17ին աղօթածողով

Արմէ տի. Սալիւի սրահին մէջ

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով

Mairieի մէջ, Justice de la Paix սրահը

.....

ԲԱՐԻՋ—Հովիւ՝ Պատ. Զ. Բ. Պուտաքեան,
10 bis Villa de la Gare, Vanves (Seine)

Կիր. ժամը 14 30ին քարոզածողով

37 Rue Tournesfort Paris 5^e

Metro Mouhe Aut. K

Ամսոյն Գ. կիրակին ժամը 16. 30ին Ե.

Ք. Բ. երկսեռ միութեանց ժողովները

Կիր. ժամը 20. 30ին աղօթածողով

ժամը 10ին կիրակնօրեայ դաս

59 Ave. du Bas Meudon Ile St Germain

Issy les Moulineaux

ԱԼՖՐՎԻԼ.—Քարոզիչ՝ Պր. Մ. Վէրիլեան
22ter Rue de Vitry Alfortville

Կիր. ժամը 9ին կիր. դպրոց

Կիր. ժամը 10ին պաշտամունք

երկու կիր. անգամ մը 7.30ին երիտ. խառն ժողով
Rue des Brochets, Alfortville

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ՍԻՒՆԱԿ

Մեր խորհրդանշանները.—

«Բանբեր»ը աւելի գեղեցիկ եւ ճաշակաւոր ընկելու մտօք այս թիւէն սկսեալ խորհրդանշաններ դրած ենք իւրաքանչիւր նիւթի տեղի Յետ այսու «Խմբագրական» բառին տեղը պիտի գտնէք սերմանացանին պատկերը: Հոն այդ խորհրդանշանին տակ խմբագրութիւնը կը ցանէ Աստուծոյ խօսքը, պտուղ դադելու յուսով:

«Հոգեւոր կեանք»ի նիւթին խորհրդանշանը պիտի ըլլայ Սուրբ Գրքի մը ետեւ կեցող մէկը որ ձեռքերը իր Գրքին վրայ դրած, ներքին հայեցողութեան մէջ է:

«Կենաց ւածոկներէն» նիւթի խորհրդանշանն է մէկը որ դաշտին մէջ իր ձեռնակառքին առջեւ կը կենայ այլեւս տուն տանելու իր հաւաքածը: Ամէն մարդ կը շինէ, ամէն մարդ կը տանի, դուն ի՞նչ պիտի տանիս տուն: Այս է խորհուրդը:

«Շնորհաց ծովէն» նիւթը կը խորհրդանշէ ծովը, որուն վրայ նաւ մը (կամ կենաց նաւը) կը քալէ: Այս նաւը ծուռ ուղղութեամբ է որ կ'երթայ. յանկարծ արեւը կը ծագի: Ս. Հոգիին լուսարձակին տակ ահա մեղաւորը կը տեսնէ իր ճամբան եւ կ'սկսի շիտկուիլ դէպի նշանակէտը:

«Պատանեաց կամ Մանկանց սիւնակ»: Դեռատի աղջիկ մը, որ Սիւքարի ջրհորին առջեւ գտնուող կնոջ նման կենդանի ջրով կը լեցնէ իր սափորը:

«Ս. Գրքի ուսումնասիրութեան» խորհրդանշանն է, Ս. Գիրքը բացուած մօմի մը լոյսին առջեւ: Լոյսը Սուրբ Հոգիին խորհրդանշանն է, ուստի Ս. Գիրքը քննենք Ս. Հոգիին խուզարկող լուսով:

ՅԱՆՁՆԱՐԱՐԵԼԻ ԳԻՐԳ ՄԸ.—

Հետաքրքրական գրքոյկ մը 62 էջնոց, որուն մէջ կը պատկերացուի Այնթապի Քրիստոսասիրաց Ընկերութեան սաղմնաւորումը, բեղմնաւորումը, անոր կրած զրկանքներն եւ ունեցած պայքարները: Յոյց կը տրուի նաեւ թէ վարդապետական տարբերութեանց պատճառաւ հետզհետէ խրամ մը բացուեցաւ եւ լայնցաւ իրենց եւ մայր եկեղեցւոյ հովիւներուն միջեւ որոնք խոռ ու քննադատական աչքով դիտեցին զանոնք:

Ըստ մեզ գրքոյկը աւելի պատմական նշանակութիւն ունի եւ հրատարակելու ջանքն ալ կ'արժէր, որպէսզի ապագային համար պահուի իբր տեղեկագիր հոգեւոր շարժման մէկ պատկերին հալ իրականութեան մէջ:

Կ'արժէ գայն կարդալ եւ շատերու ալ նուէր ընել:

Բովանդակութիւն գրքոյկին.— Քրիստոսասիրացի ծնունդը, Աւետարանչական գործունէութիւններ, կրթական շարժում, վարդապետական տարբերութիւններ, Բաղիումներ Ազգ.-եկեղեցական իշխանութիւններու հետ, Քրիստոսասիրաց ընկերութիւնը մեծ պատերազմէն ասդին, եկեղ. բարեկարգութիւն հիմնական սկզբունքը:

Գին 3 ֆր. կամ 20 սէնթ: Դիմել կամ խմբագրութեանս կամ թէ հեղինակին հասցէին, որ է, S. G. Matossian, Chez Mr. H. Tashdjian, Rue Tilel N. 11, Alep, Syrie.